ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ և ՏԵՂԱԿԱՆ ԻԿՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Հարգարժան տիկնայք և պարոնայք,

Հայտնի է, որ մարդկանց կենսագործունեությունը կառավարվում է ինչպես հատուկ ստեղծված կառուցվածքների, այնպես էլ անմիջականորեն՝ անձի և տեղական ինքնակառավարման միջոցով: Կենսագործունեության ոլորտում կարգավորման ենթակա հարցերի մասշտաբից ու կարևորությունից կախված՝ դրանց մի մասը կառավարվում է պետության կողմից կենտրոնացված ձևով, իսկ մի այլ մասը՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ապակենտրոնացված ձևով: Ահա թե ինչու «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիան հավաստում է. «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու իրական ունակությունն է՝ նպատակաուղղված է պետական գործերի մի զգալի մասի կանոնակարգմանը և կառավարմանը՝ գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ ու ելնելով տեղական բնույթի շահերից»: Ի դեպ, Եվրոպական խարտիայի այս դրույթը ամրագրված է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում, համաձայն որի. «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակչության շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցեր»: Տեղական ինքնակառավարման համակարգը նպատակաուղղված է երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և կազմակերպակառավարչական բնույթի շատ հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Այս կամ այն լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելը հնարավորություն է տալիս խուսափելու համապետական մակարդակում իշխանության ավելորդ կենտրոնացումից և կառավարությանը ձերբազատում է զուտ տեղական խնդիրները լուծելու հոգսերից: Միաժամանակ այն նպաստում է պետությունից անձի օտարման հաղթահարմանը և քաղաքացիական հասարակության հետ պետության մերձեցմանը: Տեղական ինքնակառավարումը բնակչության մեջ դաստիարակում է պատասխանատվության ու քաղաքացիության զգացումներ՝ ժողովրդավարության և անկախության համար, որի առթիվ 19-րդ դարի ֆրանսիացի քաղաքագետ-սոցիոլոգ Ալեքսիս Դե Տոկվիլի պատկերավոր արտա-հայտությամբ «այն կոչված է խաղալու այն նույն դերը, ինչ տարրական դպրոցը գիտության համար»:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգը ձևավորվել է և այն ներկայումս գտնվում է ամրապնդման փուլում: Համակարգի արմատավորումն ապահովվել է քաղաքականապես՝ 1996-2021 թվականներին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում, տնտեսապես՝ տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրված համայնքային սեփականությամբ և ինքնուրույն բյուջեով, կազմակերպորեն՝ համապատասխան լիազորություններով օժտված տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմամբ և

օրենսդրորեն՝ տեղական ինքնակառավարման իրավահարաբերությունները կարգավորող օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով: Անցած տարիների փորձը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման համակարգի արմատավորմամբ որոշակի առաջընթաց ձեռք բերվեց քաղաքացիական հասարակության կայացման, հանրային կառավարման ապակենտրոնացման, ծառայությունների մատուցումը բնակչությանը մոտեցնելու և այլ ասպարեզներում: Դրական տեղաշարժ կատարվեց «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայի սկզբունքները հնարավորինս ապահովելու ուղղությամբ, որին Հայաստանի Հանրապետությունը միացավ 2001 թվականին: Միաժամանակ տեղական ինքնակառավարման համակարգի արմատավորման գործընթացում առաջացավ դրա հետագա կատարելագործման և բնակարնոն զարգացման անհրաժեշտություն: Այդ առումով, հասարական հարաբերությունների համատեքստում, ներկայումս կարևորվում է տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի ամրապնդումը, որոնց ապահովվման համար Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին մեկնարկեց համայնքների միավորման գործընթաց: Մանսավորապես, անհրաժեշտություն էր առաջացել ընդլայնելու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, բարձրացնելու հանրային կառավարման ապակենտրոնացման աստիճանը, մեծացնելու համայնքային սեփականության շրջանակները ու ֆինանսական ապհովվածությունը, կանոնակարգելու և հստակեցնելու տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունները, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը դարձնելու ավելի թափանցիկ, հրապարակային ու վերահսկելի, ապահովելու տեղական ժողովրդավարությունը:

Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման բարեփոխումների կարևորագույն ուղղություններից է ապակենտրոնացումը: Իշխանության ապակենտրոնացումը մոտեցնում է նրան հասարակությանը, հետևաբար, ուժեղացնում է կառավարման հետադարձ կապը քաղաքացու և իշխանության միջև: Դրանով պայմաններ է ստեղծվում կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ժողովրդավարության համար: Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման փորձը ցույց է տալիս, որ համակարգի, որպես ապակենտրոնացված կառույցի, առաջընթացի հիմնական խոչընդոտը համայնքների թույլ տնտեսական և ֆինանասական հիմքն է: Հասունացած այս հիմնախնդիրների լուծումը բնականաբար պետք է սկսվեր գործող օրենսդրական դաշտի բարելավմամբ: Այդ նպատակով 2017 թվականին նոր խմբագրությամբ ուժի մեջ մտավ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով ըստ էության, կուտակված փորձի ընդհանրացման հիման վրա և առաջնորդվելով գործող համակարգի շարունակականություն ապահովելու սկզբունքով, օրենսդրոեն լուծումներ տրվեցին վերոհիշյալ այն հիմնահարցերին, որոնց իրականացումը առավել իրատեսական է արդի փուլում և առկա են դրանց լուծման ֆինասատնտեսական, կազմակերպական և տեխնիկական հագեցվածության համապատասխան պայմանները: Նոր օրենքը զգալի փոփոխություններ մտցրեց տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններում, դրանց և պետական մարմինների փոխհարաբերություններում, համայնքային սեփականության ու տնտեսական գործունեության կառուցակարգերում և ռազմավարական զարգացման հիմնահարցերում:

Որպեսզի Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարումը դառնա իրականություն, ոչ քիչ կարևորություն ունեցավ երկրի կառավարման ապակենտրոնացումը, հասկանալի է բանական սահմաններում: Ինչպես ժամանակին ասել է Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը. «Ուղղություն տալ կարելի է հեռվից, իսկ լավ կառավարել կարելի է միայն մոտիկից»: Կարևոր է հիշել, որ բանական ապակենտրոնացումը կարևոր նախադրյալներ է ստեղծում նաև հասարակության սոցիալ-քաղաքական կայունության համար: Այնտեղ, ուր կենտրոնացումը հասնում է շատ բարձր աստիճանի, տեղական իշխանությունները կորցում են նախաձեռնությունը և պատասխանատվություն չեն զգում տեղերում գործերի վիճակի համար: Միաժամանակ խիստ վտանգավոր է և մյուս ծայրահեղությունը: Շատ հեռուն գնացող ապակենտրոնացումը, ինչպես ցույց է տալիս բազմաթիվ երկրների փորձը, հանգեցնում է իրադարձությունների զարգացման վրա վերահսկողության կորստի և սոցիալ-քաղաքական իրավիճակի ապակայունացմանը: Այդ նկատառումներից ելնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 160-րդ հոդվածի համաձայն՝ մարզերում իրականացվում է պետական կառավարում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մարզերում նշանակում և ազատում է մարզպետներ, որոնք իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մարզերում պետական կառավարումն իրականացվում է հանարապետական և համայնքային շահերի ներդաշնակման, ինչպես նաև, մարզպետների և հանրապետական գործադիր մարմինների ու վերջիններիս տարածքային ծառայությունների համագործացության և գործողությունների փախհամաձայնեցման հիման վրա: Մարզպետներին կից ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ մարզի խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են համայնքների ղեկավարները և մարզպետը: Վերջինս է հրավիրում և վարում մարզխորհրդի նիստերը՝ իր սահմանած օրակարգով: Մարզի խորհրդի նիստերում մարզպետը համայնքների ղեկավարներին ծանոթացնում է Հայաստանի Հանրապետության նոր օրենսդրական ակտերին, իր որոշումներին և դրանցից բխող տեղական ինքնակառավարման խնդիրներին: Ծանոթացնում է համայնքներում տիրող իրավիճակին, տարվող աշխատանքների ընթացքին և առաջացած հիմնախնդիրներին, լսում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները՝ մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Մարզի խորհրդի նիստերում քննարկվում են նաև մարզպետի առաջարկությունները մարզի սոցիալ-տնտեսական վիճակի, սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև, պետական բյուջեից համայնքներին կատարվող հատկացումների վերաբերյալ: Իհարկե չափազանց հետաքրքիր և օգտակար է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման Եվրոպական այնպիսի երկրների փորձը, ինչպիսիք են Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Գերմանիան: Անշուշտ այդ երկրների մունիցիպալ համակարգից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու բնորոշ գծերը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության մեջ հաշվի է առնված այդ փորձը՝ սեփական պայմաններին համապատասխան: Ակնհայտ է, որ այս

ինստիտուտը մեզանում ժողովրդավարական կարգի հիմքերից մեկն է: Այն՝ իբրև ժողովրդի իշխանության արտահայտություն, կազմում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմքերից մեկը: Այստեղ տեղին է հիշատակել մեծ ժողովրդավար Ալեքսիս Դը Թոքվիլի խոսքերն այն մասին, որ «Առանց համայնքային ինստիտուտների ազգը կարող է ձևավորել ազատ կառավարություն, սակայն նա իսկական ազատության ոգի այդպես էլ ձեռք չի բերի»:

Մարզում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառներում շարունակվելու են ջանքեր գործադրվել հետևյալ թիրախների ուղղությամբ.

- Վարչատարածքային բարեփոխումների և տարածքային զարգացման գործընթացների ինտեգրում՝ տեղական ու տարածքային գերակայությունների շուրջ սոցիալ-տնտեսական զարգացում և ամուր համագործակցության ձևավորում, տարածքային և տեղական դերակատարների կարողությունների բարձրացում:
- Շարունակվելու են սահմանվել տարածքային կատավարման մարմինների միատեսակ կառուցվածք և գործառույթներ:
- Շարունակվելու են միավորված բազմաբնակավայր համայնքներում կառավարման տեղեկատվական համակարգերի «Մեկ պատուհան» սկզբունքով քաղաքացիների սպասարկման գրասենյակների ներդրման աշխատանքները:
- Միավորված համայնքների ենթակառուցվածքները բարելավելու նպատակով իրականացվելու են ներդրումային ծրագրեր:
- Իրականացվելու են լիազորությունների ապակենտրոնացմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես ճանապարհների պահպանության միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանության ու շահագործման, սոցիալական համալիր ծառայությունների կազմակերպման ու իրականացման ոլորտներում:
- Մարզի բոլոր բնակավայրերում համաչափ ու կայուն զարգացում ապահովելու, բնակչության բարեկեցությունը բարելավելու, բնակավայրերն ավելի հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր դարձնելու, ինչպես նաև գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացի բարելավում և շարունակականության ապահովում:
- Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կենցաղային կոշտ թափոնների բացասական ներգործության նվազեցում:
- Համայնքային ծառայության ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում՝ ուղղված համայնքային ծառայության ինստիտուտի դերի և տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Շնորհակալություն ուշադրության համար: